

### Արձանագրություն 3

2014 թ. մարտի 15-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ֆիզիկաքիմիական ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Ֆ. Ավետիսյան/

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյան/

3.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի 2013-2014 ուստար-վա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

/զեկ.՝ ամբիոնի վարիչ Ա.

Մուխախաչոյան/

4. Սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերն ու եղանակները:

/զեկ.՝ ԳՊՀ դասախոս Վ. Խաչատրյան/

5.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ֆիզիկաքիմիական ամբիոնի 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ Ֆ. Ավետիսյանը: Նշվեց, որ ամբիոնը համալրված է բարձրակարգ դասախոսներով, որոնք հայտնի են իրենց գիտական աշխատանքներով, կան առարկայական դասախոսությունների էլեկտրոնային տարբե-րակները, վերանայվել են առարկայական ծրագրերը, կազմակերպվել են տարբեր բնույթի միջոցառումներ, գիտաժողովներ: Բացթողումներից նշվեցին լաբորատորիաների ոչ պատշաճ վիճակը, դպրոցների հետ կապի անբավարարությունը:

Վ. Գրիգորյանը ներկայացրեց ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի գործունեության հաշվետվությունը: Նշվեց, որ նոր ուսումնական տարվա սկզբում վերանայվել և թարմացվել են առարկայական ծրագրերը, արդիականացվել են նյութերը՝ գիտական նորություններին համա-պատասխան: Ուսխորհրդի համագործակցությամբ իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, քննարկումներ, բանավեճեր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության և կատարման վրա: Այդ աշխատանքներն արդեն ավարտական փուլում են: Զեկուցողն անդրադարձավ կրթության ոլորտին վերաբերող մի շարք հարցերի, մասնավորապես բուհ-դպրոց, բուհ-հասարակություն կապերի ամրապնդմանն ու թափանցիկությանը:

Բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Ա. Մուխսի-խաչոյանը, ներկայացնելով ամբիոնում կատարված աշխատանքները, նշեց, որ փոփոխություններ են կատարվել թե՛ առարկայական ծրագրերում, թե՛ դասա-խոսական անձնակազմի աշխատառճում՝ նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ գիտական գրականությունը հիմնականում ռուսերեն է, և դրանք ամբիոնի դասախոսների ուժերով ներկայացվում են համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողներին:

ԳՊՀ դասախոս Վ. Խաչատրյանի զեկուցումը վերաբերում էր սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման ձևերին ու եղանակներին: Նա նախ ներկայացրեց գնահատման նպատակը, սկզբունքները, գործառույթները, ձևերը, ապա առանձին- առանձին անդրադարձավ ընթացիկ, ուսուցանող, միավորային, արժևորող և ամփոփիչ գնահատման առանձնահատկություններին, դրսևորման ձևերին: Զեկուցումն ուղեկցվում էր համապատասխան տեսանյութերով, գծապատկերներով: Այնուհետև ծավալվեց քննարկում զեկուցման շուրջ:

Նիստի ավարտին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը: Նա գիտխորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց ընթացիկ մի շարք հարցերի, մասնա-վորապես ԳՊՀ 16-րդ գիտաժողովի նյութերի հավաքման, աշխատանքային կարգապահության բարձրացման, հանրապետական ուսանողական գիտա-ժողովի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների վրա:

Հիմք ընդունելով հաշվետվությունները, ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1.ԳՊՀ ԲՆՖ ֆիզիկամաթեմատիկական և քիմիական ամբիոնի վարիչ Ֆ. Ավետիս-յանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ԳՊՀ ԲՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.ԳՊՀ ԲՖ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Ա. Մուխսի-խաչոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանք ները գնահատել բավարար:

4.ԳՊՀ դասախոս Վ. Խաչատրյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

5.Հետևել ԳՊՀ 16-րդ գիտաժողովի նյութերի հավաքման, խմբագրման աշխատանքներին:

6.Ամենօրյա աշխատանքներ տանել հանրապետական ուսանողական գիտա-ժողովի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ.Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ.Ասոյան